Ղազարոս Աղայան

Տորք Անգեղ և Հայկանուշ Գեղեցիկ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Բացվել է գարունը, ջրերը պղտորվել,
Սար ու ձոր կանաչել, ծաղկով զարդարվել.
Ծիծեռը գտել է իր բույնը հերվան,
Շինում է, կարկատում, դնում նոր ձվան.
Պաղ օձը տաքցել է, թողել է իր բույն,
Սոխակը մնում է վարդի բացվելուն.
Գուգարաց աշխարհը նոր կյանք է առել,
Լոքի ու Լալվարի ձյունները հալվել.
Գետակը Բողնիքի վաղ արշալույսին
Հորդացած վշշում է փրփուրն երեսին.
Անտառում Ուփրեթը՝ ամրոցն Արամյան,
Ջուգվել է, զարդարվել նոր հարսի նման.
Բուրգերից խնդության արցունք է հոսում,
Կարծես թէ սիրարժան հյուրի է սպասում:
Ամրոցի տիրուհին՝ չքնաղ ՀԱՅԿԱՆՈՒՇ,
Դեռ փափուկ անկողնում քնած է մուշ-մուշ.
Տեսնում է երազում մի մարդ աժդահա,
Մի գերան ուսին դրած՝ գալիս է ահա.
Գալիս է աժդահան ընկնում ոտքերը,
Ասում է՝ «Հայկանուշ, դո՛ւ ես իմ սերը.
Կա՛մ ինձ այս գերանով զարկիր, սպանիր,

Եվ կա՛մ իմ խնդիրքս լսիր , ընդունիր»:
Վեր կացավ տիրուհին փափուկ անկողնից.
Ինչպես մի նոր արև ծովի խորքերից.
Ոսկեմազ ծամերը՝ ճաճանչի նման՝
Ծածկեցին մինչև ոտք հասակն աննման.
Երեք-չորս նաժիշտներ մոտեցան կուսին,
Տոն օրվա հագուստով նրան զուգեցին:
Նոր տեսած երազը գրավել է նրան,
Մտքիցը չի ընկնում ահռելի հսկան.
«Մենք շուտով, ասում է, մեկ հյուր կունենանք.
Պետք է նրա առջև դուռը չբանանք.
Ես տեսա երազում մի մարդ ահարկու,
Եկել էր ոտքս ընկել՝ իբրև փեսացու»…
– «Այդ հսկան, թե կուզես իմանալ ճիշտը,
Ասում է ժպտալով նրա նաժիշտը, –
Երեկվա գուսանի երգի հերոսն է,
Պասքամյան աժդահա Անգեղյան Տորքն է:
Պարխարյան լեռներում՝ երգչի ասելով՝
Կենում է մի հովիվ քաջ Տորք անունով.
Նա մի շատ հաղթանդամ հսկա է զորեղ,
Բայց սիրտը բարի է, թեև դեմքն ահեղ.
(Թող մարդս կոշտ լինի անհարթ սարի պես,
Բայց սիրտը չլինի անշունչ քարի պես).
Նրան շատ սիրում են թե մարդ, թե գազան,
Առյուծ և վագրեր են հոտին պահապան,
Նա խոմ քո ցեղիցդ է, քեզ մոտ ազգակից,
Մի պապի թոռներ եք և մեկ արյունից.
Գուսանի ներբողը ազդել վրադ,
Երազում տեսել ես ազգակից հսկադ»:
– «Դուք պատրաստ մնացեք, ինչ էլ որ լինի,
Թող վրաս ունենամ իմ թուրն հավլունի.
Ամրոցի դռները ամուր փակեցեք,
Լվացեք գլխներդ, մաքուր հագնվեցեք.

Ես գիտեմ, երազս պիտի կատարվի,
Մենք հյուրին կընդունենք, եթե ներս մտնի:
Թե փակած դռնովը ներս գալ կարենա,
Այդ նշան կլինի, որ քաջ Տորքն է նա»:
Իրավ որ քաջ Տորքն էր երազի հսկան,
Ե՛կ գնանք, ընթերցող, և բերենք նրան: